հոգիին հատկություններովը գիտցավ տիրանալ ամբողջ ազգին վստահության ու հարգանքին և ապահով կայքի մը հասցնել փոքրկահար նավը մեր ազգին:

Հայրական գուրգուրանք Իրեն հանձնված հոտին հանդեպ, ճշմարիտ հայրենասիրություն, խորունկ հավատք, գործելու հզոր կամք և իմաստուն հստակատեսություն ու ղեկավարություն— անավասիկ մի քանին այն առաքինություններեն, որոնցմով Գեորգ Զ. երանաշնորհ Հայրապետը հաջողեցավ վերբստին զորացնել ու ծավալել հմայքը Ս. Էջմիածնի Մայր Աթոռին: Հայրենական պատերազմին ի նպաստ Իր ստեղծած շարժումը, հայրենադարձի ծրագիրին գործադրման մեջ կատարած Իր բարերար դերը, ազգերու միջև խաղաղություն հիմնավորելու և զորացնելու ձգտող Իր ջանքերը, մեր ժողովուրդի, ինչպես և Եկեղեցիին միասնականությունը ամրապնդելու կոչված Իր իմաստուն քայլերը, Լուսավորչի դարավոր այս Աթոռին՝ Ս. Էջմիածնի պայծառացման և անոր կամարներուն ներքև հոգևոր կյանքի վերարծարծման ի հաշիվ իրագործած Իր անգնահատելի արդյունքները կմնան մշտապես խոսուն վկաները Իր հոգվույն ու մտքին մեծության:

Բացառիկ չափերով մեծ անձնավորություն մըն է, ուրեմն, որ այսօր կհանձնենք նվիրական հողին: Եվ ա՛յնքան մեծ է մեր կրսկիծը, որքան մեծ է պարապը, զոր կթողու հոգելույս Հայրապետը Իր ետին: Մեծ է նաև անոր համար, որ Երուսաղեմի և Անթիլիասի արդեն թափուր երկու Աթոռներուն վրա կավելնա Լուսավորչի Աթոռն ալ:

Այս սուրբ Վեհավայրին մեջ, ուր իջեր է Աստվածորդին Ինքը, մեր մեծ հայրապետներու նայվածքին առջև սրտեռանդն կաղոթենք. «Տէ՛ր, միշտ անշա՛րժ պահեա զԱթոռս Հայկազնեան»:

Սիրելի՛ և հավատացյալ ժողովո՛ւրդ հայոց. աղոթենք, որ Ամենաբարին Աստված վարձահատույց բլլա բազմերախտ Հանգուցյալին և շնորհե արժանընտիր Դահակալ մը Լուսավորչի Ս. Աթոռին, ի փառս և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո: Ամեն:

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(Միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի)

ՀԱՆԳԻ՞ՍՏ ՄԵԾ ՀՈՎՎԱՊԵՏԻՆ

Սգո այս ծանր ոպեին, երբ բոլորիս սիրտը ընկճված է և արտասուքները մեզ խեղդում են և ողբում ենք մեր մեծ Հայրապետի մահը, երբ այս բազմահազար ժողովուրդը իր արտասուքները խառնում է ընդհանուրիս արտասուքների հետ, անշուշտ Սփյուռքի հայությունն էլ վշտակից է մեզ հետ և ողբում է Գեորգ Զ.ի անակնկալ մահը:

Վեհափառ Հայրապետի մահով մեծ կորուստ են կրում հավատացյալ հայ ժողովուրդն ու Հայ Եկեղեցին:

Այսօր մեզ հետ ողբում է այլ երկրներում տարագիր ապրող ողջ հայությունը:

Թյուրքիայի հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյանը, Կոստանդնուպոլսի ու տաճկահայոց անունից, հեռագրով պարտականություն է դրել վրաս՝ բաղմանը իր ներկայացուցիչը լինել և հայտնել իր և տաճկահայոց խորին ցավակցությունը Վեհափառի մահվան առթիվ:

Այսօր, Ս. Էջմիածնի զանգերի հետ միասին, Կոստանդնուպոլսի եկեղեցիներում ևս տխուր ու ծանր հնչում են զանգերը, որոնց ղողանջների տակ ողբում է մեզ հետ նաև տաճկահայությունը:

Թո՛ղ երկնային Տերը հոգվո անմահություն պարգևի մեր Վեհափառ Հայրապետին, և թե՛ մենք և թե՛ մեր տարագիր եղբայրներն էլ Ս. Հոգվով մխիթարվենք:

Թո՛ղ թեթև լինի հողը խոնջացած մարմնիդ վրա, մեծ Հովվապետ: